



21. ՉԻՆՈՒՄԱՉԻՆԱ ԱՂՋԻԿ

Ժամանակով թաղավոր մե կէղնի, էդ թագավորին տղե մե կէղնի, էդ տղեն քրմնօր կէրթեր սար նեճիր կէներ, ուր ճամպեն նախորդի դոնով գրնցներ: Նախորդի իրեք աղջիկներ լե դելնեն կանեն ուրանց դուռ, թագավորի տղեն օր դիկեր գրնցներ՝ մեծ աղջիկ կըսեր.

— Թե թագավորի տղեն զիսի առնե, հմալ խալի պտի դործիմ, օր ուր ասկար-լաշկար նստի վրեն, հլա կես լե մնա ծալուկ:

Միջնեկ աղջիկ կըսե.

— Թե թագավորի տղեն զիսի առնե, հմալ հաց ու զադ կէնիմ, օր ախշարք ըսկի չը գտվի:

Պզտիկ աղջիկ կըսե.

— Թագավորի տղեն թե զիսի առնե, հմալ էրկու ճիժ պտի բերիմ, օր մեկի ճանկն օսկի, մեկելի գանգն օսկի էղնի:

Թագավորի տղեն զիրեք քուր լե կառնե, կէնե ուրին կնիկ: Օրե-րուց օր մե թագավորի տղեն կըսե.

— Կնի՛կ, ո՛ւր է, չէ՞ դու խալի-խալիչա պտի գործեր, ըպա ընչի՛ գքու հոմար չըս ցուցու:

— Թագավորի տղա, — կըսե մեծ քուր, — ես նախորդի աղջիկ իմ, իմ պապու դուռ էժ ու օխշար կանե՞ր է, ըսկի բուրդ ու բամբկի քերես տեսե՞ր իմ, օր քրզի խալի-խալիչա դործիմ:

Միջնակ աղջկան կըսե.

— Վաղիր-նազիր ուրանց աթառով խոնախ պտի գան, հազըր-վորի, օր հաց շատ էնիս:

— Քա՛ վո՛ւյ, սևով շէղներ, ես նախորդի աղջիկ իմ, ժողվածուրիկ հաց իմ կերի, ես հաց ու զադ գինա՞մ պատրաստիմ:

էղավ օր թագավորի տղեն դուշմընի դեմ գնաց կռիվ. տարուց չեվել քշեց էդ կռիվ: Ին ամիս, ին օր, ին սհաթ, ին դախա օր կը թմի, պզտիկ քուր կը պարկի բերե էրկու էրեխա՝ աղջիկ մե ու տղե մե, աղջկա նանկն օսկի, տզի դանգն օսկի: Քուրվտիք կը նախանձին, գեղնան թուղթ կը գրին թագավորի տզին՝ թե չըսիս, մեր քուր պարկեր է էրկու շան լակոտ է բերի, արթըխ դու դինաս, ինչ կէնիս էրե՛:

Թագավորի աղեն կը գրե մըջ թղթին, թե զշան լակոտներ կորցուցեք, դուրանց մամ լե փաթեք մըջ խսլին, տարեք կապեք թագավորի դիվնի գուռ չընցնող-դառձող թըղ թքուն չերես, էնին նալաթ-լամա:

Քուրվտիք դուրանց պզտիկ քուր կը փաթին ի խսիլ, զընջիլ կը թալին ի վիզ, կը տանին կապին թագավորի դիվնու դուռ, չընցնող դառձող կը թքուն չերես կէնին նալաթլամա: Ջաղջիկ ու տղեն լե կը դնին մըջ խութի մե, զբերան կը փակին, կը տանին թալին ի դետ: Գետ, գու դինաս, կառնե զսնդուկ ու կը տանե ծովնուվի կը հանե դուռ: Ծովու չեզը հալվոր մե ու պառավ մե կապրին, կը հանին սընդուկն ի ծովեն, կը բանան, օր ի՛նչ, աղջիկ մե ու տղե մե, աղջկա ճանկն էր օսկի, տզին՝ գանգն էր օսկի:

Մարդ ու կին ավլա-թավլա շունեն, զէրեխեք կը պահին, կը մեծցուն, սորա կը մեռնին, կը մնան ախպերն ու քուր մինակ: Տղեն ուրին նետ ու աղեղ կը ճարե, չըմնօր կէրթա սար, նեճիր կէնե կը բերե, ըզըքնով ուրանց իդարա կէնին:

Օրերուց օր մե թագավորի տղեն կէրթա սար նեճիրի, խազալ մե կը տեսնա, զընկնա չետև, հա՛ չոդա, հա՛ չոնա, էդ է հասվեհաս կէղնի, մեկ լե կը տեսնա՝ ջըհել տղե մե, ծամերն օսկի, կը հասնի զխաղալ կառնե տանե, թագավորի տղեն կը պաղբերնի մնա, դարտակ կը դառնա տուն, ուր կնկտոց կը պատմե՝ թե հմլա՞, հմլա՞... Քուրվտիք զմռթներ ուրանց կը խաժին, կըսին իրարու.

— Կա ու չկա ըզի մեր քրոջ աղեն է: Ի՛մալ էնինք, ի՛մալ շենինք...

Ջաղուքար պառավ մե կը գտնան, զբանի էութեն ուրին խսա կէնին, ճանկ մե օսկի գըլնան լըփ, կըսին.

— Հար չուր էդնի զէդ տղի բուն-բթոթք կը գտնաս, խաբլութենով, հմալ տեղ մե կը ճամպիս, օր էրթալ էզնի, դառնալ շէղնի:

Պառավ զճոկան կանն ձեռք, տքտքալով գրնկնա ճամպա, շատ կը դվռնե, դտղի տուն ու աղջկան կը գտնա: Աղջիկ մինակ կէղնի. «ը՛, ը՛» էնելով կը մտնա ի ներս:

— Բարի լուս քրզի, օրգի՛:

— Վո՛ւյ, աստժոռ բարին քրզի, նանե, բարով իս էկի:

— Բարին արևդ, գառ ջան:

— Նանե ջան, էդ ի՛մալ էղավ, օր դու յոդա էկար:

— Լա՛ո, ճամպեն մոլրա, զձեր տուն օր տեսա, ըսի, մտնամ ի ներս, ո՛ն կա, ո՛ն չկա: Էդ յորի՞ն հմալ մինակ իս, սիրտդի չը նե՞ղվի:

— Ըպա ի՛մալ չը նեղվի, ախպերսի կէրթա սար, նեճիր կէնե, հարի յիրկուն չիգա, ես կը մնամ տանուվի մինակ, մարդու յերես չըմ տեսնա, գեղ ու քաղթից հեռու ինք յընկի, մարդ գդուռ չը բանա վոր մըղի:

— Ը՛, ը՛, նանեն մեռնի քրզի, լա՛ո, ես իմ աղջկան խելք մե սորվըցում. ախպորդի կըսիս թըդ էրթա Բլբլեվին ծառի ճուղ մը բերե տնկե դուռ, մեծնա թուփ ու տերե տա, էն դախ քամին օր դարկե՛ ընդրա ճղեր, թփեր թոտլու-թոտլու ձեն կը հանին, կը ճլվլան, կը լսիս, կուրախնաս, էլ քու ջըհել ջան չը հալվի ու մաշվի: Մինակու-թեն դոր է՛, լա՛ո, մեռնիմ քրզի:

Պառավն օր գելնա կէրթա, աղջիկ գրնկնա մըջ մտքին, նիաթ կէնե, դմոթըններ կը կախե, յիրկուն, օր ախպեր գիկա՝ յառեջ չէրթա: Տղեն գիկա, կը զարմանա, կիշկե քոռջ, կըսե.

— Յա՛, քուր ջան, յորի՞նիս զնիաթդ էրի, ի՞նչ է էղի:

— Գու կէրթաս դուս, սար ու ձոր, ջուն ու ջանավար կը տեսնաս, սիրտդի կը բացվի, ես մինակ տունուվի հարի յիրկուն նստուկ՝ իմ սիրտ կը պատուի: Գնա՛ ընձի Բլբլեվին ծառեն ճուղ մը բի, տնկիմ ի դուռ, ճուղ իտա, թուփ ու տերե իտա, քամին զարկե, ուր թուփ ու տերե բլբլան, իմ սիրտ բացվի:

Օլոր օր տղեն գելնա գրնկնա ճամպեն, շատ կէրթա, քիչ կէրթա, կը տեսնա հալվոր մե էրկու ճամպի կցվնոք նստուկ է:

— Բարի լուս, պա՛պե,— կըսե տղեն:

— Աստժու բարին, օրգի՛, էգ յո՛ւր կէրթաս:

— Կէրթամ, բալբի Բլբլեվին ծառեն ճուղ մը բերիմ իմ քոռջ, տնկիմ դուռ, ճուղ տա, թուփ ու տերե տա, քամին զարկե՛ ճուղն ու տերե բլբլան, օր իմ քուր ուրախնա:

— Է՛, օրգի՛, քու քուրն ու դու կնկա խաբուկ իք: Բլբլեվին ծառեն ճուղ բերել հմալ ըռհաթ չէ. էն խըղար մարդիկ գացին ու

չես չէկա՛ն, «գիդան գլալմագ»-ի ճամպա է, ընծի լսիս՝ չես կը դառնաս:

— Չէ՛, պապե, էկեր իմ, պտի էրթամ, շարա չկա:

— Դե օր կէրթաս էն ճամպով մ'էրթա, իդա ճամպով գնա: Կէրթաս կը ճանպտիս րանձր սարի մե, էդ սարի վրեն է Բլբլբլին ծառերու մեջեն, օր հասար՝ ճուղ մե կը պրծուա, կը փախնիս, ծառեր չըմեն լեզու գելնան քու չետեեն, կը բոռան. «Հողեղեն տարա՛վ զհրեղեն», չէղնի դառնաս չետեղի իշկիս, օր իշկեցիր՝ կը դառնաս քար:

Տղեն կէրթա, կէրթա, կը հասնի Բլբլբլին ծառերու մեջեն, ճուղ մը կը պրծու ու կը փախնի: Մառերն չետեեն կը բոռան.

— Հողեղեն տարա՛վ զհրեղեն:

Տղեն չետե չը դառնա, կառնե զճուղ, կը բերե հասու քրոջ, կը տնկե ի գուռ, ծառ ու ճուղ կը դառնա, թուփ ու տերե կիտա, էն գահ, օր քամին կը զարկե՝ կը բլբլեն, ուր քուր կուրախներ:

Տղեն էլման կառնե զնետ ու անեղ՝ կէրթա սար նեծիրի, էլման թագավորի տղեն ռաստ գիկա ուրին, խազայի չետե կը լարե, տղեն զխաղալ կը փախցու, թագավորի տղեն դարտակ ու բոջ կը դառնա տուն, ուր կնկտոց խսա կէնե, կնկտիք զմոռթ ուրանց կը խածին, կըսին. «Կա չկա՛ մեր քրոջ տղեն կէղնի»: Կը կանչին զպառավ կը բերին, կըսին.

— Պառա՛վ, քու էրկու լուս քոռնա, տղեն դառձեր է, էկի: Ա՛ռ քրզի բուռ մե օսկի, գնա խաբլութենով, ուր քրոջ ձեռքով՝ զտղեն հմալ տեղ մի ճամպիս, օր էրթալ էղնի, գալ չէղնի:

Պառալ կուզեկուզ, ճոկան ի ձեռք, տնկտնկալով կէրթա աղջկա տուն.

— Բարի լուս քրզի, աղջիկ շան, իմալ իս, ի՞նչ խեր ու հարցում, քեֆգի աղե՛կ է:

— Աստժու բարին քրդի, շոջիկ, դու բարով էկար, հազար բարով էկար. առքայութենի փայ էղնիս, իմալ օր սալբխ էրիր՝ ախպերսի գնաց Բլբլբլին ծառի ճուղ բերեց, հանդե տնկեր ինք ի դուռ, ծառ ու ճուղ է՛ դառձի, թուփ ու տերե է՛ տվի, էն գահ օր քամին կը զարկե՝ թուռլու-թուռլու ձեն կը հանին, կը բլբլան, իմ սիրտ կը բացվի, չառեշվա պես մալուլ չիմ: Հըմա, շոջո շան, ինչ խըդար էլ էղնի՝ մարդու հետ խոջ ու բեշն ուրիշ է, ծառի բլբլալն ուրիշ:

— Էն աղեկ, օր դու ըսիր, լա՛ո, օղորդ է, հազար Բլբլբլին ծառ էղնի, հազար հավք ու հավքորեքի ձեն չընկնա մարդու անկաջ՝ մարդու սրտին չը նստի, մարդու չընկեր է պետք, օր չիրարու հետ խոսան, ջան ըսին, շան լսին, մարդու սիրտ ըռհաթի, քու ախպոր

կրսիս, օր Կէրթա Չինումաչինի թագավորի աղջիկ բերն, կարգվի հևա, էն գահ օր ինք կէրթա սար նեճիրի, դու ու քու ախարրկին չիրարու հետ կը խոսաք, խոշ ու բեշ կէնիք, կուրախնաք, Բլրլեվին ծառի բլրլալն լե չեվելի ու չեվելի: Դե, մանցի բարի, հանդե, ես գացի:

Պառավ կէրթա, աղջիկն էլման դուր նիաթ կէնե, զմոթրնեք թիզ մե կը կախե, ախպերն օր դիկա՝ նա՛ չառչև կերթա, նա՛ կը ծիծղուտա:

— Յա՛, քուր ջան, ի՞նչ է էղի, չորի՞ն հմալ մալուլ իս:

— Ի՞նչ էնիմ զԲլրլեվին ծառ, զվղեր իմ ուր բլրլոցեն: Գնա՛ զՉինումաչինա թագավորի աղջիկ րի՛, կարգվի հետ, էղնի ընձի չընկեր, էն դախ օր դու կէրթաս նեճիրի՝ ես ու չինք խոսանք չիրարու հետ, սիրտսի բացվի:

Քրոշ խաթրուն՝ տղեն գընկնա ճամպեն ու կէրթա: Կէրթա, կէրթա, էլման հալվորու մոտ գելնա դուս:

— Բարի լուս, պա՛պի:

— Աստժու բարին քրղի, օրգի՛, էս հաղո՞ւն չուր կէրթաս:

— Կէրթամ Չինումաչինա թագավորի աղջիկ բերիմ, օր իմ քրոշ չընկեր էղնի, հըտ չիրարու խոշ ու բեշ էնին, իմ քրոշ սիրտ բացվի, Բլրլեվին ծառից զվղեր է:

— Հը՛,— քնծղտաց պապեն,— ջադուքար կնկա խարուկ իք դո՛ւ լե, քու քուր լե: Օրգի՛, Չինումաչինա թագավորի աղջիկ սեր-բաղ է, ինչ խըդար մարդ գացեր է ուր մոտ, զրմեն էրեր է շոր քար՝ դրեր է մըջ հողուն: Արի ընձի անկաջ էրե, մ՛էրթա, ափսոս իս, զքու ջան մի՛ տա դուս: Էթթըցողն օր կէրթա ընդրա մոտ, օր հեռ-վեն կը կանչե. «Չինումաչինի աղջի՛կ», էնի թե ըսեց՝ «ջա՛ն», հանդե սաղ կը մնա, թե ըսեց՝ «Չոռ ու ցա՛վ», կէղնի քար, սորա կը տանե հորե մըջ հողուն:

— Չէ՛, պապե, շարա շկա, կէրթամ, ինչ օր մարդու ճակտին գրուկ է՛ էն կէղնի:

Տղեն գընկնա ճամպեն ու կէրթա. շատ կէրթա, քիչ կէրթա, կը հասնի Չինումաչինա թագավորի քաղաք: Կէրթա աղջկա քոշկ ու սարի տակ կանի, կը կանչե.

— Չինումաչինա աղջի՛կ:

Ներսեն ձեն գիկա.

«Չոռ ու ցա՛վ»:

Տղեն կը դառնա քար, կը տանին հորին մեկել ջըհեկներու մոտ: Իրեք օր կը թմի, թագավորի աղջիկ կէրթա օր տղի գերեզման տես-

նա, յոթ փաթ գերեզմանի բոլոր կը դվոննե, կը տեսնա՝ տղի օսկե ձամեր փոռուկ է վըր դերեզմանի քարին, գերեզմանի միջեն ձեն գիկա. «Զինումաչինա աղջիկ»։ Աղջիկ յոթ հեղ կըսե՝ «ջա՛ն, ջա՛ն»։ Աստըծու հրամանով տղեն կը սաղնա, գելնա գերեզմանեն, կէրթա աղջկա հետ տուն։ էդ աղջիկ սերրազ էր, թուղթ իշկեր էր առաջուց, օր օսկեգանգ տղե մե պտի առնե գինք։

Տղեն ու աղջիկ կառնին գիրար, շատ մալ ու դուլվաթ, շատ զուգս ու զարդարանք կառնին հըտ ուրանց գիկան տղի տուն, ուրանց քոշկ ու սարա կը շինին, բաղ ու բաղշա կը տնկին, մեկ դիեն Բլբլեվին ծառեր կը ճլվլան ու կը սլսլան, մեկ դիեն Զինումաչինա աղջիկ կը խոսա քոշ հետ, քոշ սիրտ կը բացվի, կուրախնա։

Տղեն նեծիրվանութենի թարք չի տա, կառնե զուր նետ ու անեղ կէրթա սար։ Թագավորի տղեն լե դիկա սար նեծիր էնելու, օր զգանզըն օսկի տղեն կը տեսնա, կը հասնի դձեռք կը բռնե, կըսե.

— էրկու հեղ դու գիմ նեծիր իմ ձեռքեն թոցուցիր տարար, լե իմ սիրտ քըզնե չկտրեր է։ Ծա թագավորի տղեն իմ, լուսուն ղիկաս քաղաք, զմեր տուն կը հարցուս, կը մտնաս ներս, ըսկի մարդուց մը՝ վախենա, գիրար կը տեսնանք, փշու մե կը ժղլինք։

Տղեն գիկա Զինումաչինա աղջկան խսա կէնե, թե. «Թագավորի տղեն ընձի ոսստ էկավ, գիսի կանչեց ուր տուն։ Վազ պտի էրթամ, չէղնի օր չէրթամ»։ Թագավորի տղեն լե կէրթա ուր կնկտոց խսա կէնե, թե. «Գանգն օսկի տղե մե տեսեր իմ ի սար, կանչեր իմ, օր լուսուն գա մեր տուն։ Հաց ու զագի թատարուքն էրեք, օր մեկտեղ ուտինք, խմինք, թամաշա էնինք ընդրա օսկե ծամեր. ըպա՛ տեսնելու բա՛ն է...»։

Կնկտիք զմոռութեներ ուրանց կը խածին, կըսին.

— Սե կապեցինք, չէղնի էդի մեր քոշ տղեն էղնի, վա՛յ թե մեր փրուզեն չերեան չելնի, աստված ո՛չ էնե, օր էն էղա՛վ՝ մեր էրթու օրն է։

Գելնան սրախի մեջ գողտուկ հոր մե կիտան փորել, խալի-խալիչով կը ծածկին, օր տղեն գա պատի մեջ, զըսրեն բերին՝ կորցուն էրթա։ Աման մ՛էրկու զագի մեջ աղու կը թալին, օր դնին տղի չառեջ, ուտե մեռնի։

Զինումաչինա աղջիկ մարդուն կըսե.

— Մա՛րգ, օր կէրթաս, զքու տաժին տար հետդի, օր կը մտնաս Ներս՝ տաժին ո՛ր դիով քելեց, դու ընդրա չետեեն գնա։ Կերակուլ օր կը դնին չառչեղի. բրդուճ մե թալ տաժու չառեջ, թե տաժին կերավ՝ դու լե կուտիս, թե շըկերավ՝ շուտիս։ Գընցնաս թագավորի

դիվնի յառջևով, կնիկ մե հանդե փաթուկ մըջ խսլին, զնջիլ թալուկ է վիզ, չընցնող-դառնող կը թքուն յերես ու զընցնան կէրթան: Դու չը թքուս ընդրա յերես, էնի քու ծնող մամն է, դու խնձոր մե թալ յառջեն ու չընցի գնա:

Տղեն կէրթա թագավորի աղի մոտ, իմալ օր Չինումաշինա աղ- ջիկ թանրի էրեր էր, հմալ կէնե, սալամաթ յետ կը դառնա դիկա: Գալուց յառեջ՝ տղեն կըսե թագավորի տղին.

— Խնդիրք կէնիմ քո յոտնեն, օր վաղ լե դո քու վազիր-նա- զիրով դաս իմ տուն փշու մե ժողով էնինք:

Թագավորի տղեն, վազիր-նազիրն ի հետ, ուր աթպաով կէրթա տղի տուն, կուտին, կը խմին, օր կը տեսնան զաղջիկ՝ ճանկն օսկի, զտղեն՝ գանգն օսկի, խելք ուրանց կէրթա: Թագավորի տղեն դինա զուր սիրտ ճղած ին, զխապերն ու քուր դրած մեջ: Կերակուկ կուտին, կը քաշվին մեկ դեն, Չինումաշինա աղջիկը կը բերե օսկե ճետ մե կը դնե վըր սեղնին, կուտիկ մե խաշած ցորեն կը դնե յառջև, կըսե.

— Թագավորն ապրած կենա, խնդիրք կէնինք քըզնե հրամանք տուր, օր ճետ զհատիկն ուտե:

Թագավորի տղեն կըսե.

— Օսկե ճետ ըսկի հատիկ կուտե՞, էղնելո՞ւ բան է:

— Էղնելու բան չէ, օր օսկե ճետ հատիկ ուտե, էղնելու բան է, օր կնիկ շան լակոտ բերե: Ըշտե իդա քու աղջիկ՝ ճանկն օսկի, իդա լե քո տղեն՝ գանգն օսկի, քու պզտիկ կնիկ իմալ օր ըսեր է վախտով թե. «Թագավորի տղեն օր զիս առնե, էրկու ճիժ կը բերիմ՝ մեկին ճանկն օսկի, մեկելին՝ գանգն օսկի»: Քո կընկտիք քըզի խաբած ին հարի յըսօր, զուրանց խեղճ քուր զնջիլն ի վիզ, փաթուկ մըջ խսլին, դրած ին դուռ, էրթող-զալացող կը թքուն յերես:

Թագավորի տղեն գելնա զուր աղջկա ու տղի յերսներ կը պագե, զՉինումաշինա աղջկն ուր զտղեն ու աղջիկ կառնե գիկա տուն, զկնիկ կը հանե ուր կապուկ տեղեն, զմեծ քուրվտիք կիտա կապել լձիանու պոչն ու կը թողե սար ու ձոր, քարին կը զարկին, պալին կը զարկին, կէնին հազար կտոր:

